Խաչիկ Բ Անեցին՝ Տարոնտայի Թավրիզը, Գրիգոր Բ Վկայասերը՝ Ծամենդավը։

Ցանկալի էր հին հայկական այն անունները, որոնք հնում ունեցել են հունարեն համարժեքներ, բերվեին այդ ձևով և ոչ ժամանակակից արևմտահայերեն արտասանությամբ։

Ցանկալի էր նաև, որ հայերեն տերմիններին կից, փակագծերի մեջ տրվեր նրանց հունարեն թարգմանությունը։ Այդ բանը կատարված է, բայց հազվադեպ (թարգմանված են Թիֆլիսի հայ թերթերի անունները)։

Նշված թերությունները, որ անխուսափելի են նման մեծածավալ աշխատանքում, որակ չեն կազմում, հեշտությամբ ուղղելի են։ Մնում է ցանկալի, որ Հ. Ղազարյանը նույն ոգևորությամբ ու պատասխանատվության զգացումով շարունակի իր շնորհակալ աշխատանքը։

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԾԱՐԺԵՔ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

1980 թ. հունվարի 25-ին Երևանում բացվեց Հայկական ՍՍՀ-ում առաջին դրամագիտական ցուցահանդեսը։ Դրամագիտությունը, որը Եվրոպայում շուրջ 300 տարվա զարգացման ճանապարհ է անցել, որպես գիտական մտքի ասպարեզ մեզանում նոր է։ Դրամագիտական նյութերի ցուցադրությունը երախտագիտության ու հարգանքի տուրք էր բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են բերել և շարունակում են նպաստել Հայկական ՍՍՀ-ում դրամագիտության զարգացմանը։ Ցուցահանդեսում ներկայացված էին հին և միջնադարյան մետաղադրամների ու մեդալների բազմաթիվ նմուշներ։ Հիրավի, աշխարհի բոլոր երկրները չէ, որ կարող են ներկայացնել հին հունական պոլիսների, աքեմենյան Իրանի, Ալեքսանդր Մակեդոնացու, հռոմեական, պարթևական, սասանյան ինքնակալների, Բյուզանդական կայսրության, արաբական խալիֆայության, սելջուկյան պետությունների, Կիլիկիայի հայկական թագավորության, մոնղոլական խանների և շատ այլ բազմալեզու արձանագրություններով ու պատկերներով թողարկված դրամների բնորոշ տիպերը։

Դրամագիտական այդ նյութերը Հայաստանին նվիրել են Եղնիկ Գարագաշյանը (Ռումինիա, Բուխարեստ), Զարեհ Պտուկյանը (ԱՄՆ, Նյու Յորք), Արմենակ Փոլադյանը (Լիբանան, Բեյրութ), Փառանձեմ և Գեղամ Գալաճյանները (ԱՄՆ, Նյու Յորք), Հասմիկ և Երվանդ Ամատունիները (ԱՄՆ, Ֆիլադելֆիա), Նապոլեոն Բըլրկյանը (Ֆրանսիա, Լիոն), Երվանդ և Ֆոնֆոն Ալլրճյանները (Ֆրանսիա, Նիս), Հայկ և Թորգոմ Ղազարոսյանները (Իտալիա, Սան Ռեմո) և ուրիշներ։ Վերջին ժամանակներս հավաքված շուրջ 17000 դրամներից ու մեդալներից ընտրվել էին հազարից ավելի նմուշներ, որոնք և ներկայացնում էին Սփյուռքի հայերի նվերները մայր հայրենիքին նրա վերածննդի 60-ամյակի շեմին։ Այդ նյութերը հնարավորություն ընձեռեցին կազմակերպելու մի այնպիսի ցուցադրություն, ուր ներկայացված էին Միջերկրականի արևմտյան կողմերից մինչև Հնդկաստանի հյուսիսն ընդգրկող երկրներում պատմական տարբեր դարաշրջաններում թողարկված դրամական միավորները։ Դրանց կշռային չափերը, պատկերների ու մակագրությունների հաղորդած տվյալները, շրջանառության ոլորտներին, ինչպես նաև առանձին դինաստիաների ծագմանը վերաբերող վկայությունները կարևոր նշանակություն ունեն պատմական շատ հարցերի պարզաբանման համար։

Մի կողմ թողնելով մանրամասնությունները, հարկ ենք համարում խոսել ցուցադրված ժողովածուներից մի քանիսի բովանդակության մասին։ Հիշատակության արժանի է Եղնիկ Գարագաշյանի (Բուխարեստ) հին հունական ոսկե ու արծաթե դրամների հավաքածուն, որի շնորհիվ կարելի է տեսնել մ. թ. ա. VII—V դդ. վերաբերող դրամական միավորներից առանձին նմուշներ, թողարկված Էգեյան ծովի ավազանում, ինչպես նաև Փոքր Ասիայի հոնիական վաճառաշահ քաղաքներում։ Եթե նկատի առնվի, որ հաստատուն կշռային չափերով, պետականորեն վավերացված մետաղե դրամները առաջին անգամ հանդես են եկել հին հունական քաղաքակրթության ոլորտում մ. թ. ա. VIII—VII դդ. սահմանագլխին, ապա պարզ կդառնա այն ներդրման արժեքը, որ ի դեմս Եղնիկ Գարագաշյանի կատարել է ռումինահայ գաղթօջախը Հայաստանում դրամագիտության զարգացման ուղղությամբ։ Այսօր հին աշխարհի դրամներով այնքան հարուստ կովկասյան երկրներից միայն Հայաստանում են պահվում էգինյան ու ատտիկյան կշռային համակարգին պատկանող վաղագույն դրամական միավորները։ Բուն Ատտիկայի, Պելոպոնեսի, Մակեդոնիայի, Թրակիայի և հին հունական այլ երկրամասերում թողարկված դասական ու հելլենիստական պատկերագրության դրախմներից, տետրադրախմներից ու սոլիդների բազ-

մաթիվ նմուշներից բացի Եղնիկ Գարագաշյանի հավաքած դրամների շարքում ներկայացված են նաև Հռոմի հանրապետության, ինչպես նաև կայսրության ժամանակներում թողարկված արծաթե ու ոսկե դրամների բազմաթիվ օրինակներ, որոնք հանգուցյալ հնասերը ամբողջությամբ նվիրել է մայր հայրենիքին։

Հիշյալ հավաքածուի մեջ կան նաև վաղ բյուզանդական հազվագյուտ ոսկե դրամներ, արևմտաեվրոպական և ռուսական արծաթե ու ոսկե միջնադարյան դրամներ։ Առանց չափազանցության կարելի է ասել, որ միայն Եղնիկ Գարագաշյանի նվիրած դրամագիտական հավաքածուն բավական էր, որ Հայաստանի պատմության թանգարանին ճանաչում բերեր հնագիտական աշխարհում։

Դրամագիտական երկրորդ խոշոր հավաքածուն պարունակում է Սիրիայում և հարևան երկրներում ժողովված ավելի քան 5000 արծաթե ու պղնձե դրամներ, ինչպես նաև շուրջ 300 արևելյան կնիքների օրինակներ։ Այդ նյութերը մոտ 6 տասնամյակի ընթացքում հավաքել է դրամագետ Պերճ Կարապետյանը։ 1971 թ. այդ հարուստ հավաքածուն անցել է Ղազարոսյան եղբայրներին (Սան Ռեմո), որոնք և այն նվիրել են Հայաստանի պատմության թանգարանին։ Վաղագույն դրամական միավորն այստեղ վերաբերում է մ. թ. ա. I դարին, իսկ նորագույնը՝ մեր օրերին։ Բացառությամբ մի քանի սելևկյան, հայկական (արտաշեսյան) և Հայաստանին վերաբերող Հռոմի կայսրական դրամների, Ղազարոսյան եղբայրների դրամագիտական ժողովածուն բաղկացած է առավելապես միջնադարյան դրամներից։ Դրանք իրենց հիմնական խմբերով ստորաբաժանվում են հետևյալ կերպ.

Սասանյան ինքնակալություն	5 դրամ
Բյուզանդական կայսրության	62 »
Արաբական խալիֆայության	1453 »
Էյուբյան տիրակալությունների	777 »
Մոնղոլական տիրակալությունների	137 »
Արաբական ամիրայությունների	130 »
Կիլիկիայի հայկական թագավորության	1463 »
Սելջուկյան տիրակալությունների	770 »
Խաչակիր ասպետների	115 »
Օսմանյան սուլթանների	432 »
Իրանական շահերի	27 »
Անորոշ և մաշված	30 »

Հիշատակվածներից առավել խոշոր խմբերը ժամանակագրական առումով արտացոլում են Մերձավոր Արևելքի երկրներում կատարված անցյալի գրեթե բոլոր կարևոր իրադարձությունները, որոնք վերաբերում են դրամակշռային սիստեմներին։

Հատկապես ուշագրավ են արաբական խալիֆայության օմայան և աբբասյան պղնձե ու արծաթե դրամները, ինչպես նաև խալիֆայության անկման տարիներին նրա տրոհումից առաջացած ամիրայությունների դրամական միավորները, որոնք ըստ արձանագրությունների տվյալներ են հաղորդում Սիրիայի, Իրանի, Իրաքի և միջինասիական երկրների վերաբերյալ։ Հատկանշական է, որ արևելագիտության շատ կենտրոններ այսօրվա վիճակով չունեն արաբական խալիֆայության վաղ շրջանի՝ այսպես կոչված «նախաոեֆորմյան» դրամների այն մի շարք նմուշները, որոնք հիմա արդեն, շնորհիվ Ղազարոսյան եղբայրների, հանգրվանել են Հայաստանի պատմության թանգարանում։

Այդ ժողովածուի միջոցով կարելի է կոնկրետ պատկերացում ունենալ Իսպանիայից մինչև Խորասան, Աղվանքից մինչև Պարսից ծոց հասնող հսկայական տարածքի վրա Օմայաններին ենթակա գրեթե բոլոր վաճառաշահ քաղաքներում թողարկված դրամների բնորոշ տվյալների մասին։ Նույն հետևողականությամբ հավաքված են VIII—X դդ. Աբբասյան խալիֆաների, նրանց գահաժառանգների ու նահանգային կառավարիչների անուններով թողարկված դրամները։ Մանրամասնությամբ դիտվում են նաև, Հայաստանում հազվագեպ, աշ-Շաշում, Սամարղանդում ու Բուխարայում թողարկված Սամանյան գահակալների, Հալեպում, Սոսուլում, Մծբինում և Միջագետքի այլ քաղաքներում դրվագված Համդանյանների, ինչպես նաև Շիրազում, Բաղդադում, Բասրայում, Վասիտում, Ահվազում և Ֆարսի ու Իրաքի այլ քաղաքներում թողարկված Բուվեհյան ամիրաների դիրհեմները։ Ամիրայական այդ դրամների վրա նշված տեղանունները, անձնանունները ու տարեթվերը հնարավորություն են ընձեռում ստուգելու գրավոր աղբյուրների հաղորդումները և կազմելու հիշյալ դինաստիաների ժամանակագրության ճշգրիտ ցուցակները։ Ինչ. վերաբերում է սելջուկյան, մոնղոլական, էյուբյան, թեմուրյան, օսմանյան և մանավանդ Կիլիկիայի հայկական թագավորության ռուբինյան և հեթումյան դրամների հոծ խմբերին, ապա հաղիվ թե առանց դրանց օգտագործման հնարավոր լինի առաջիկայում ստեղծել լիարժեք դրամագիտական կատալոգներ ու քննական տեսություններ։ Այդ առումով խիստ կարևոր է Ղազարոսյան եղբայրների նվիրած արևելյան դրամների ու կնիքների, ինչպես և Եղնիկ Գարագաշյանի հավաքածուները պատկերազարդ ալբոմներով հրատարակելու գործը։

Երրորդ հավաքածուն կազմված է Իրանի արեմնյան պետության (մ. թ. ա. VI—IV դդ.) արծաթե դրամների հազվագյուտ նմուշներից՝ նվիրաբերված ծագումով կեսարացի, ներկայումս բնյրությաբնակ հնասեր Արմենակ Փոլադյանի կողմից։ Ընդհանրապես Աքեմենյան գահակալների դրամները դասվում են բացառիկ թանգարանային արժեքների շարքը։ Դրանք թողարկվել են առավելապես բուն Իրանից դուրս, փոքրասիական քաղաքներում և Միջագետքում, Հայաստանում և կենտրոնական Իրանում այդ կարգի դրամները լայն տարածում չեն ունեցել։ Նախահելլենիստական ժամանակներում դրանց շրջանառությունը եղել է Բաբելոնում, Եգիպտոսում, Փյունիկիայում և վերջինիս հարևան շուկաներում։ Շահեկան է, որ այժմ արդեն Հայաստանի թանգարանում յոթ տարբերակներով կարելի է տեսնել հին պարսկական «սիգլ» կոչված արծաթե այդ արխաիկ դրամների մի քանի նմուշներ։ Արմենակ Փոլադյանը դեռևս Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո թանգարանին նվիրել էր Անտիոքից (Սիրիա) ոչ շատ հեռու՝ «Դափնե» կոչված հնավայրում գտնված XIII դարի հայկական դրամների մի ամբողջական գանձ։ Վերջինիս մասին ժամանակին հաղորդվել է, սակայն հարկ է երախտագիտությամբ ավելացնել, որ այդ գանձի պարունակությունը հնարավորություն է ընձեռում դատելու ոչ միայն Կիլիկիայի հայկական թագավորության դրամական տնտեսության, այլև Իկոնիայի սուլթանության հետ ունեցած նրա հարաբերությունների մասին։ Արմենակ Փոլադյանը Հայաստանին նվիրել է նաև XII—XIV դդ. ոսկե ու արծաթե դրամների այլ հավաքածուներ, որոնք ներկայումս ուսումնասիրվում են։

Կարևոր պիտի համարել նաև մ. թ. ա. II դարի Ծոփքի հայոց թագավոր Քսերքսեսի պատկերով և նրա անվան հունարեն գրությամբ հազվագյուտ պղնձե դրամը, որ նվիրաբերել են Փառանձեմ ու Գեղամ Գալաճյանները (Նյու Յորք)։ Նրանք նվիրել են նաև նույնքան հազվագյուտ այլ հայկական դրամներ։ Սակայն դրանց շարքում արտակարգ է Արտավազդ II «արքայից արքայի» պատկերով պղնձե դրամը։ Վերջինս դրվագվել է հին փյունիկյան դրամի հատանոցը (կլորակը) օգտագործելու միջոցով, այսինքն հարթել են նրա վրա նախապես եղած պատկերները և գրությունները և դրոշմել նորը՝ Արտավազդ II-ի դիմաքանդակը, ըստ որում, նոր դրոշմի տակից նշմարելի են փյունիկյանի մնացորդները։ Որտե՞ղ և ի՞նչ պայմաններում է գտնվել Արտավազդ II արքայի տվյալ դրամը՝ տեղեկություններ չկան։ Սակայն հավանական պիտի համարել այն ենթադրությունը, որ տեղական շուկայի կարիքների համար թողարկված պղնձե դրամները սովորաբար շրջանառության մեջ էին լինում իրենց դրվագման վայրերում, տվյալ դեպքում՝ սիրիա-փյունիկյան շրջաններում, որ մ. թ. ա. 40 թ. հայ-պարթևական զորքերը նվաճել էին սիրիական, փյունիկյան և պաղեստինյան մի շարք քաղաքներ[1]։ Բացառված չէ, որ Արտավազդ II արքայի պատկերը հենց այդ ժամանակ կարող էր դրոշմվել փյունիկյան դրամի վրա։

Գալաճյանների հավաքածուի մեջ կան նաև Անտիոքում և Դամասկոսում թողարկված Տիգրան Մեծի պատկերով արծաթե ու պղնձե դրամներ, որոնց տարբերակները համալրեցին այդ օրինակ նյութերի շարքը։ Տիգրան Մեծի պատկերով սիրիական թողարկման դրամներ Հայաստանի թանգարանին նվիրել է նաև Գրիգոր Մազլումյանը (Սիրիա, Հալեպ)[2]։ Ինչպես Գալաճյան ամուսինները, այնպես էլ Գրիգոր Մազլումյանը հելլենիստական դարաշրջանի հայկական դրամներից բացի թանգարանին նվիրել են նաև Կիլիկիայի հայ գահակալների դրամների բավական ստվար հավաքածուներ։ Բացի հիշատակվածներից, Կիլիկիայի հայկական դրամների հարուստ հավաքածուներ են նվիրել նաև Զարեհ Պտուկյանը, Միսակ Ճեվահիրճյանը, Հասմիկ և Երվանդ Ամատունի ամուսինները և շատ ուրիշներ։ Պատկերագրության տվյալներով ինչպես այդ, այնպես էլ հելլենիստական ու հռոմեական դրամները հաճախ հանդես են բերված կրկնություններով, այսինքն նույն տիպի միավորը բազմաթիվ օրինակներով։

Դրամագիտական բոլոր նյութերն իրենց ներքին ստորաբաժանումներով ներկայումս մշակվում են հրատարակելու համար։ Նկատի են առնված ոչ միայն դրամների, այլև մեդալների, այն հավաքածուները, որոնք կենտրոնացվել են Հայաստանի պատմության թանգարանում։

Հատուկ քննության առարկա է ծագումով մայաթիացի, ներկայումս Լիոն քաղաքի բնակիչ Նապոլեոն Բելլեկյանի նվիրած ֆրանսիական մեդալների հավաքածուն։

Ցուցահանդեսի փակումից հետո թանգարանին նվիրաբերվեցին դրամների նոր հավաքածուներ, որոնց հարկ է անդրադառնալ։

---

1 Տե՛ս Հակոբ Մանանդյան, Երկեր, հատ. Ա, Երևան, 1977, էջ 254—255։

2 Գրիգոր Մազլումյանի նվիրած դրամագիտական նյութերի մասին տե՛ս «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում, 12 դեկտեմբերի 1979։

Զարեհ Պտուկյանը պարբերաբար դրամագիտական մեծարժեք նյութերով հարստացնում է մեր թանգարանը։ Տակավին վերջերս Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի միջոցով Զարեհ Պտուկյանը նվիրեց դրամագիտական մի փոքրիկ ժողովածու, որը լուրջ ներդրում է Հայկական ՍՍՀ թանգարանային ֆոնդերի համալրման գործում։ Նվիրաբերված են բացառապես արտաշեսյան պղնձե դրամներ, որոնք իրենց պատկերագրության տվյալներով ըստ գահակալների՝ ստորաբաժանվում են հետևյալ ձևով.

Տիգրան I (123—96)	2 հատ
Տիգրան II (95—56)	17 »
Արտավազդ II (55—34)	1 »
Արտաշես II (30—20)	1 »
Տիգրան III (20—8)	2 »
Տիգրան IV (8—5)	4 »
Արտավազդ III (5—2)	1 »
Տիգրան IV և Էրատո (2—1)	1 »

Բացի Տիգրան Մեծի դրամներից, բոլոր մնացած Արտաշեսյան գահակալների դրամները հազվագյուտ են։ Արքայական և դիցական պատկերներով արտաշեսյան այս դրամները լինելով պղնձից, առավելապես ներքին շուկայի կարիքների համար են թողարկվել։ Յուրաքանչյուրի վրա, գահակալի պատկերից բացի դրոշմված են նաև նախաքրիստոնեական ժամանակներում հայերի մեջ ընդունված հավատալիքներին վերաբերող նշաններ։ Արտաշեսյան պղնձե դրամների վրա է, որ առավել շատ երկրի ներքին կյանքին վերաբերող դիցական պատկերներ են հանդես բերվել։ Պարզ դիտվում են Վահագնի, Պտղաբերության, Հաղթանակի, Առատության և այլ դիցական կերպարներ, ինչպես նաև խորհրդանշաններ՝ կենաց ծառ, հատկ, ամաղթեղջյուր, ձի, առյուծ, արծիվ և այլն։ Այդ առումով էլ հիշյալ դրամները իրենց ժամանակը ներկայացնող անմիջական վկայություններ են հելլենիստական դարաշրջանում ստեղծված հայկական պետության պատմության վերաբերյալ։ Շնորհիվ այդ հավաքածուի հնարավոր դարձավ Հայաստանում տեսնել Տիգրան I հայոց արքայի դիմաքանդակը և նրա անվան ու տիտղոսի «Թագավորի Մեծի Տիգրանի հելլենասերի» հունարեն արձանագրությունը, ինչպես նաև՝ հեթանոսական դիցարանին վերաբերող նշանները։ Դժբախտաբար Տիգրան I-ի գահակալության տարիներին թողարկված դրամներից ընդհանրապես շատ քիչ նմուշներ են պահպանվել։ Նկատենք, որ Արտաշեսյանների տիրապետության հյուսիս-արևելյան շրջաններում նրանց պղնձե դրամների տարածման մասին դատելու հնարավորությունները սահմանափակ են։ Արտաշատի հնագիտական պեղումներից ի հայտ եկած նոր նյութերը թերևս առաջիկայում հնարավորություն ընձեռեն ուրվագծելու հին հայկական պղնձե դրամների շրջանառության ոլորտը։ Սակայն ցարդ հրապարակված տվյալները ցույց են տալիս, որ Տիգրան I-ի պատկերով պղնձե դրամները ի հայտ են եկել առավելապես Մեծ Հայքի հարավ-արևմուտքում, Աղձնիքից դեպի Միգդոնիա ձգվող տարածքի վրա, վաճառաշահ Մծբին քաղաքին մոտ վայրերում։ Արտաշեսյան դրամների զանգվածային թողարկումը կատարվել է Տիգրան Մեծի գահակալության տարիներին (95—56) և միանգամայն օրինաչափ է, որ այդ տարիներից ավելի շատ դրամական միավորներ են պահպանվել։ Ավելին, ի տարբերություն իր բոլոր նախորդների ու հաջորդների, Տիգրան Մեծը տասը տարուց ավելի հանդիսացել է ոչ միայն Հայաստանի, այլև միաժամանակ Ասորիքի թագավորը։ Ասորիքի վաճառաշահ քաղաքներում, մասնավորապես Անտիոքում և Դամասկոսում մ. թ. ա. 83—69 թթ. Տիգրան Մեծի պատկերով դրամներ են թողարկվել։ Այդ քաղաքները տնտեսական կյանքի պահանջով բյուրավոր թելերով կապված են եղել Միջերկրականի արևելյան ու արևմտյան շրջանների հետ։ Ասորիքում, մինչ Տիգրան Մեծը, դրամագործությունը զարգացման դարավոր փորձ ուներ։

Զ. Պտուկյանը նվիրել է այնպիսի տիգրանյան դրամներ, որոնք դրվագվել են առավելապես ասորոց քաղաքներում։ Դրանց վրա պատկերված է մի կողմից՝ Տիգրան Մեծի կիսանդրին, հինավուրց հայկական թագը գլխին, իսկ մյուս կողմից պաշտամունքային կերպարանքներ ու նշաններ և հունարեն արձանագրություններ։ Կան նաև դրամներ, որոնց թողարկումը կատարվել է բուն Հայաստանում։ Այդպիսիների վրա Տիգրան Մեծը ներկայացված է իր «արքայից արքա» տիտղոսի հունարեն արձանագրությամբ։ Ուշագրավ է, որ քանակապես շատ են այն դրամները, որոնց վրա Տիգրան Մեծի դիմաքանդակին զուգահեռ, նրա հակառակ կողմի վրա պատկերված է հաղթանակի թևավոր դիցուհու կերպարանքը (Նիկե)։ Դրանց թողարկմամբ Արտաշեսյանները նպատակ են ունեցել հաղորդելու իրենց հաղթանակների մասին՝ կատարված Տիգրան Մեծի գահակալության տարիներին, մասնավորապես մ. թ. ա. 80—70-ական թթ.։ Սակայն հաղթանակների առթիվ մասսայաբար թողարկված դրամներից բացի, հավաքածուի մեջ առկա են նաև հազվագյուտ դրամներ։ Այսպիսին է ցորենի հասկի

և Տիգրան Մեծի պատկերով ու նրա անվան հիշատակությամբ դրամը։ Ցորենի հասկը պտղաբերության նշան էր՝ կապված երկրի մայր դիցուհու պաշտամունքի հետ։ Արտաշեսյանների ժամանակներում Հայաստանի տնտեսական կյանքում հացահատիկի մշակությունը կարևոր դեր ու նշանակություն ուներ։ Կարևոր պիտի համարել նաև Զ. Պտուկյանի վերջերս նվիրած դրամներից այն օրինակները, որոնց վրա Տիգրան Մեծի պատկերից բացի դրվագված է առասպելական հերոս Վահագնի կերպարանքը։ Հելլենոսական հավատալիքներում հրաշապատված կիսամարդ-կիսաստված Վահագնը Հայոց մեջ օժտված էր նույն բարեմասնություններով, ինչ հունաց մեջ Հերակլեսը։ Վերջինիս կերպարանքը հելլենիստական քանդակներում դիտվում էր առավելապես մերկամարմին տեսքով։ Այդ նույն տեսքով էլ Վահագնը պատկերված է Տիգրան Մեծի դրամների վրա, դեմքով դեպի միապետի անունն ու տիտղոսը հիշատակող հունարեն գրությունը։ Ողջ հասակով, մերկամարմին տեսքով առասպելական հերոսի պատկերման այդ ձևը նորություն չէր։ Այն հայտնի էր անցյալներում՝ աքեմենյան սատրապ Տիրիբազոսի և այնուհետև պարթևաց Միհրդատ I-ի դրամներից։

Տիգրան—Վահագն պատկերներով դրամների վրա հայոց միապետը ներկայացված է «արքայից արքա» տիտղոսի հունարեն գրությամբ։ Պարթևներից նվաճած այդ տիտղոսը սխրանք էր համարվում և Արտաշեսյանները Վահագնի պատկերով ընդգծում էին իրենց արքայի արժանապատվությունը։ Այդ նույն տիտղոսի հիշատակությամբ թողարկված այլ դրամների վրա Տիգրան Մեծի դիմաքանդակն ուղեկցվում է առատության եղջյուրի պատկերով։ Այս միջոցով շեշտվում էր այն միտքը, թե Տիգրան Մեծի օրոք նրա թագավորության մեջ առատություն է եղել։ Կան նաև միապետության գլխավոր քաղաքների մայր դիցուհիների պատկերներով դրամներ՝ թողարկված տարբեր փոքրագրության կնիքների դրոշմով։ Հարկ է ընդգծել, որ քաղաքամայր դիցուհիների կերպարանքները, որոնք հրեմն դիտվում են հելլենիստական դրամների վրա, առաջին անգամ հանդես են եկել Տիգրան Մեծի օրոք։ Այդ ժամանակներում երկիրը հովանավորող մայր դիցուհու պաշտամունքը պետական երկրպագության աստիճանի էր բարձրացվել։ Դրամների վրա այն պատկերվում էր խաղաղ դիրքով բարձրության վրա նստած, ողջ մարմնով նուրբ ծիրանու մեջ պարուրված, մի ձեռքին ցորենի հասկ բռնած, որպես պտղաբերության նշան, իսկ մյուսը՝ հենած իր գահույքին, որից ներքև դիտվում է լողացող մերկամարմին տղամարդու կերպարանք, որպես հոսող ջրի խորհրդանիշ։ Հողի և ջրի պաշտամունքի այս ձևավորումը հետագայում հանդես եկավ իր տարբերակներով։ Այն իրողությունը, որ դիցուհու գլուխը սովորաբար զարդարվում էր աշտարակաձև թագով՝ քաղաքային միջնաբերդի պարիսպները հիշատակելու նշան էր, իսկ միջնաբերդի պարիսպներից ներս տեղավորված էին լինում արքունական ապարանքները, դիվանատունը, կայազորը, փողերանոցը, պաշտամունքային մեհյանները, կառավարչական հաստատությունները և այլն։ Տիգրան Մեծի պատկերով այդօրինակ դրամները թողարկվում էին Արտաշատում, Տիգրանակերտում, Անտիոքում և Դամասկոսում։ Նկատենք, որ Դամասկոսի դրամների վրա մայր դիցուհին պատկերվում էր առատության եղջյուրը կրծքին մոտ բռնած դիրքով։

Հռոմեական տիրապետության ժամանակներում Հայաստանին վերաբերող դրամների վրա մայր դիցուհու հիշյալ կերպարանքը որոշ ձևափոխությամբ էր ներկայացվում։ Այն ևս պատկերվում էր դրամի երկրորդ կողմի դաշտի կենտրոնում, բայց ոչ թե բարձրության վրա խաղաղ դիրքով վեհորեն բազմած, այլ գետնի վրա, գլխիկոր վիճակում նստած կերպարանքով, ըստ որում դիցուհու գլխին այլևս չէր լինում միջնաբերդը հիշեցնող աշտարակաձև թագը։ Հռոմեական այդ պատկերն ըստ էության խորհրդանշում էր պարտված մայր Հայաստանը։ Տարիներ առաջ այդօրինակ դրամներ ևս նվիրաբերվել էին Հայաստանի թանգարանին։ Զ. Պտուկյանի նվիրած դրամներից խիստ հազվագյուտ են նաև այն օրինակները, որոնց վրա մի կողմից դրոշմված է Տիգրան Մեծի պատկերը, իսկ մյուս կողմից՝ Կոմմագենեի Անտիոքոս թագավորի անվան հունարեն գրությունը։ Դրանք փաստեր են հայ-կոմմագենյան հարաբերությունների պատմությունից։ Նկատենք, որ Արտավազդ II հայոց արքայի (56—34) ողբերգական մահից հետո նրա որդու՝ Արտաշես II արքայի (30—20) գահակալության տարիներից նյութական մշակույթի անմիջական վկայություններ գրեթե չեն պահպանվել։ Հետևաբար մեծարժեք պետք է համարել Զ. Պտուկյանի նվիրած պղնձե դրամը Արտաշես II-ի պատկերով։ Համաշխարհային առումով հայտնի են ընդամենը հինգ նմուշներ, որոնցից մեկը ներկայումս արդեն պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում։ Քաղաքական պատմության տեսակետից այդ դրամը հիշատակ է մնացել մաքառումների այն տարիներից, երբ Արտաշեսյանների գլխավորությամբ հայ ժողովուրդը վռնդեց իր երկրից

հռոմեական զավթիչներին և մի փոքր շունչ քաշեց, թեկուզ շատ կարճատև ժամանակով վերականգնեց յուր պետական անկախությունը։ Սակայն այդ անկախությունը եղավ Արտաշեսյանների թագավորության մայրամուտին և էապես կապված է հայերի համար նվիրական Արտաշես II հայրենասեր արքայի մարտնչող գործունեության հետ՝ ուղղված հռոմեական նվաճողների դեմ։ Նվիրաբերված արտաշեսյան դրամների շարքից ուշագրավ է «արքայի Մեծի Տիգրանի աստծո» հունարեն արձանագրությամբ Տիգրան III հայոց թագավորին (20—8) վերագրված պղնձե դրամը։ Միապետին աստվածացնելու այդ պաշտոնական տիտղոսաձևը հելլենիստական աշխարհում նորություն չէր։ Պատահական չէր նաև, որ այն արձանագրվում էր դրամի կենտրոնում պատկերված քայլող ձիու շուրջը։ Ձիու պատկեր-խորհրդանիշը կապվում է հայոց հեթանոսական հավատալիքների, մասնավորապես արևի պաշտամունքի հետ։ Ի վերջո, պատկերների ու գրությունների չորս տարբերակներով ներկայացված են Տիգրան IV (8—5) արքայի գահակալության առաջին շրջանի դրամները։ Ի տարբերություն իր հոր՝ Տիգրան III-ի և պապի՝ Արտավազդ II «արքայից արքայի», Տիգրան IV-ը մորուքավոր է, այսինքն ներկայացված է այնպիսի տեսքով, որպես ընդունված էր պարթևաց թագավորների մոտ։ Արևմուտքի հելլենիստական պատկերների ավանդական ձևից շեղված և Արևելքի, մասնավորապես Հայաստանին անմիջականորեն հարևան Պարթևաստանի միապետներին նմանվելու այդ ձևը արտակարգ էր հայոց արքայական դիմաքանդակների շարքում։ Այդ նույն տեսքով պատկերվում էր Տիգրան IV հայոց արքան նաև իր գահակալության երկրորդ շրջանում (մ. թ. ա. 2—մ. թ. 1 թթ.), բայց ոչ միայնակ, այլ քրոջ՝ Էրատոյի հետ։ Թագավոր-թագուհու միասնական պատկերով դրամների թողարկումը հելլենիստական Արևելքում հաղվադեպ էր։ Հայաստանում այն եղավ բացառիկ և կրկնվեց մոտ մ. թ. 6 թ., Տիգրան V արքայի օրոք, սակայն ոչ զույգ դիմաքանդակների միատեղ տեսքով, այլ առանձին-առանձին, այսինքն դրամի մի կողմին՝ Տիգրան V-ի, իսկ մյուս կողմին՝ Էրատո թագուհու պատկերով։ Ի տարբերություն Տիգրան IV-ի, նրա գահաժառանգի տարիներին թողարկված դրամների վրա Էրատոյի անունը հիշատակվում էր որպես Տիգրան թագավորի քրոջ, ըստ որում այդ հիշատակությունը հունարեն նշվում էր Էրատոյի պատկերի շուրջ, այնպես, ինչպես Տիգրան V արքայի պատկերի շուրջ նշվում էր նրա տիտղոսը «ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱ» և կամ «ՄԵԾ ԱՐՔԱ» ձևով։ Տիգրան—Էրատո կիսադեմ զույգ պատկերներով դրամների հակառակ կողմերին դրոշմված էր առատության դիցուհու կերպարանքը նստած դիրքով։ Պատկերագրության այդ ձևը բնորոշ էր Դամասկոսում թողարկված դրամներին, որոնք դրվագվում էին դեռևս Տիգրան Մեծի ժամանակներում։ Իբրև հազվագյուտ նմուշ հավաքածուի մեջ կա նաև Արտավազդ III հայոց արքայի (5—2) դրամը։ Վերջինիս վրա արքայից բացի կենտրոնական դիրքով պատկերված է նաև Աթենաս դիցուհին իր պաշտամունքի հիմնական նշաններով՝ սաղավարտով, նիզակով ու վահանով։ Ըստ որում Աթենասի կերպարանքի շուրջ ընթերցվում է «ԱՐՔԱՅԻ ՄԵԾԻ ԱՐՏԱՎԱԶԴԻ» հունարեն գրությունը։

Զ. Պտոսկյանի նվիրած հին հայկական դրամների հիշյալ օրինակներից բացի Արտաշեսյան թագավորության պղնձե դրամներ են նվիրել նաև Անդրանիկ Այվազյանը և Նշան Կենճոյանը (Սիրիա)։ Դրանք առավելապես Անտիոք և Դամասկոս քաղաքներում թողարկված Տիգրան Մեծի պատկերով քաղկոսներ են։ Սակայն կան նաև Տիգրան Մեծի հոր՝ Տիգրան I-ի (123—96), թոռան՝ Տիգրան III-ի (20—8) և ծոռան՝ Տիգրան IV-ի (8—5) պատկերներով պղնձե դրամներից առանձին նմուշներ, որոնցով համալրվեց Արտաշեսյան դրամների հավաքածուն։ Հելլենիստական դարաշրջանի հայկական ծագում ունեցող դրամներից զատ նվիրաբերվել են մակեդոնական, սելևկյան, հռոմեական, մասնավորապես Միջագետքի և սիրիա-փյունիկյան քաղաքներում թողարկված հռոմեական պղնձե դրամներ։ Անդրանիկ Այվազյանի և Նշան Կենճոյանի նվիրած նյութերի մեջ առկա են Անտիոքում դրվագված հռոմեական դրամներ Ներոնի (54—68), Սեպտիմոս Սեվերոսի (193—211), Լիցինիոսի (308—324), ինչպես նաև բյուզանդական դրամներ Կոստանդին (324—337), Արկադիոս (395—408), Թեոդոսիոս (408—450), Հուստինիանոս (527—565), Հերակլես (610—640) և այլ կայսրերի պատկերներով։ Հիշատակելի են նաև Օսրոենի Աբգարյան թագավորների պղնձե դրամների շարքից Հ. Ղալաջյանի (Նյու Յորք) նվիրած հազվագյուտ օրինակները։ Տարբեր սոցիալ-տնտեսական ֆորմացիաներում գործառական նշանակություն ունեցած այդ բոլոր դրամական միավորները ներկայումս ուսումնասիրվում են առաջին հերթին նրանց պատկերագրության ընդհանուր տվյալները ներկայացնելու նպատակով։

Պատ. գիտ. դոկտոր Խ. Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ